

◀◀ բանկային համակարգի 2011 թ-ի գործունեության ամփոփում

2011 թ-ին բանկային համակարգը գործել է բնականոն հունով, ապահովել հիմնական ցուցանիշների կայուն և համեմատական բարձր աճ: Հաշվետու տարում համակարգի բոլոր բանկերը, բացառությամբ մեկի, տարին փակել են շահույթով. համակարգի տարվա մաքուր շահույթը կազմել է մոտ 43.0 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակինը՝ մոտ 11.4 մլրդ դրամ:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2011 թ-ի ընթացքում աճել են 32.3 %-ով կամ 506.6 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 2,074,0 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել են մոտ 184.7 մլրդ դրամով կամ 9.8 %-ով: Համեմատության համար նշենք, որ 2010 թ-ի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 16.4 %-ով կամ 221.4 մլրդ դրամով, իսկ չորրորդ եռամսյակում՝ 7.9 %-ով կամ 115.2 մլրդ դրամով:

Վարկային ներդրումներ


Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 33.6 %-ով կամ 336.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 12.2 %-ով կամ 14.6 մլրդ դրամով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 1,337.2 և 134.3 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 7.7 %-ով կամ 95.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 10.3 %-ով կամ 12.5 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ 2010 թ-ին վարկային ներդրումներն աճել էին 28.7 %-ով կամ 223.0 մլրդ դրամով, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 10.9 %-ով կամ 98.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 28.6 %-ով կամ 26.6 մլրդ դրամով, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 15.9 %-ով կամ 16.5 մլրդ դրամով: 2011 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 64.5 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 65.9 %-ը կամ 881.0 մլրդ դրամ, և այս ցուցանիշը տարվա ընթացքում աճել է 44.3 %-ով կամ 270.4 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 9.0 %-ով կամ 72.5 մլրդ դրամով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 5.5 %-ի կամ 31.6 մլրդ դրամի դիմաց: Հարկ է միայն նշել, որ նախորդ տարում տնտեսությանը տրված վարկերը աճել էին 30.4 %-ով կամ 142.3 մլրդ դրամով:

2011 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2011 թ-ի ընթացքում աճել են 22.5 %-ով կամ 71.2 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 387.8 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական

անձանց տրված վարկերի աճը կազմել է 9.0 % կամ 31.9 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ նախորդ տարում ֆիզիկական անձանց տրված վարկերն աճել էին 19.9 %-ով կամ 52.5 մլրդ դրամով, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 13.7 %-ով կամ 38.1 մլրդ դրամով: Հաշվետու տարվա վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 29.0 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են ընդհանուր վարկային ներդրումների 18.7 %-ը կամ 249.7 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 8.3 %-ը կամ 111.6 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 27.2 %-ով կամ 53.4 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 22.4 %-ով կամ 20.4 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 10.4 % կամ 23.4 մլրդ դրամ և 8.6 % կամ 8.8 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2010 թ-ի ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել էր 7.7 % կամ 14.1 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 13.2 % կամ 23.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 7.2 % կամ 6.1 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 1.8 % կամ 1.7 մլրդ դրամ:




Պարտավորություններ

2011 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,699.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 37.3 %-ով կամ 461.8 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում աճել է 11.2 %-ով կամ 170.8 մլրդ դրամով: Ընդ որում՝ նախորդ տարում ընդհանուր պարտավորությունների աճը կազմել էր 16.8 % կամ 177.9 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 9.0 % կամ 102.6 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու տարվա ընթացքում աճել են 37.0 %-ով կամ 150.8 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 34.0 %-ով կամ 125.7 մլրդ դրամով և տարեվերջին համապատասխանաբար կազմել 558.6 և 495.2 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների տարեկան աճը կազմել է 42.8 % կամ 130.2 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 16.5 % կամ մոտ 29.6 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերոնշյալ ցուցանիշների աճ է գրանցվել նաև հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 12.2 %-ով կամ 60.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 14.2 %-ով կամ 54.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 10.5 %-ով կամ 47.2 մլրդ դրամով, այդ թվում ժամկետային ավանդները՝ 5.5 %-ով կամ 10.8 մլրդ դրամով: Համադրելիության համար նշենք, որ 2010 թ-ի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 20.1 %-ով կամ 68.3 մլրդ դրամով,


այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 22.3 %-ով կամ 55.4 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 0.7 %-ով կամ 2.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները նվազել 2.1 %-ով կամ 3.8 մլրդ դրամով: Ընդ որում՝ վերոնշյալ տարվա չորրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդների աճը կազմել էր 10.6 % կամ 38.9 մլրդ դրամ, այդ թվում՝ ժամկետային ավանդներինը՝ 12.4 % կամ 33.5 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդների աճը՝ 7.1 % կամ 24.6 մլրդ դրամ, այդ թվում՝ ժամկետային ավանդներինը՝ 15.4 % կամ 23.9 մլրդ դրամ: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու տարվա վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 62.0 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2011 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Ընդհանուր կապիտալ

« Բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 13.6 %-ով կամ 44.8 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 375.1 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի և եկամուտների պահուստի ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը չորրորդ եռամսյակում ավելացել է 3.9 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա ընթացքում ավելացել էր 15.2 %-ով կամ 43.5 մլրդ դրամով, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 4.0 %-ով կամ 12.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը չորրորդ եռամսյակում աճել է 12.9 %-ով կամ 17.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 152.0 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 40.5 %-ը, ընդ որում՝ վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա կտրվածքով աճել է 17.6 %-ով կամ 22.8 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարում չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) աճը կազմել էր 43.1 % կամ 38.9 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 17.3 % կամ 19.1 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու տարվա ընթացքում աճել է 14.8 %-ով կամ 30.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 233.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 62.4 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ է գրանցվել նաև հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում, որը կազմել է 3.3 % կամ 7.5 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ 2010 թ-ի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 8.0 %-ով կամ 15.2 մլրդ դրամով:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարվա ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 25.8 %-ով կամ 54.8 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 25.6 %-ով կամ 43.3 մլրդ դրամով՝ տարբերջին կազմելով համապատասխանաբար 266.7 և 212.2 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր եկամուտների աճը կազմել է 11.4 % կամ 7.8 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 11.4 % կամ 6.3 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ 2010 թ-ի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտների աճը կազմել էր 13.8 % կամ 25.7 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 19.1 % կամ 9.6 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 2.2 % կամ 3.6 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում՝ 18.6 % կամ 7.3 մլրդ դրամ:

Շահույթ


ՀՀ բանկային համակարգում հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 43.0 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2010 թ.-ին ստացված մաքուր շահույթի ծավալին գերազանցել է 9.3 մլրդ դրամով կամ 27.6 %-ով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ապահովվել է 11.4 մլրդ դրամի մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշը գերազանցել է 18.8 %-ով կամ 1.8 մլրդ դրամով:

Անփոփ ցուցանիշներ

2011 թ.-ի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 12.55 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 2.36 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 1.43 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.04 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները

Սկրո դրամ



ՀՀ բանկային համակարգի մակրոտնտեսական բնութագրիչները

Հ/Հ	Տնտեսությունում ՀՀ բանկային համակարգի դերը բնութագրող ցուցանիշները	01.01.2009 թ.	01.01.2010 թ..	01.01.2011 թ.	01.01.2012 թ.
1	Ընդհանուր ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	28.4	42.5	44.7	54.2
2	Ընդհանուր վարկային ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	17.7	24.6	28.5	34.9
3	Ընդհանուր կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին, %	6.5	9.1	9.4	9.8
4	Ֆիզիկական անձանց ավանդների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	6.4	10.7	11.6	14.6

2011 թ.-ի ղեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը չորրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Յ/Յ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/վնաս	Զբաղ. շահույթ IV-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	217304,1	5,2	1	154775,3	12,5	173336,1	6,5	1	33502,8	-3,7	43968,0	0,5	1	30000,0	0,0	6374,0	1441,7
2	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ	179065,4	3,0	4	114043,7	2,0	148748,8	2,7	4	40040,1	15,1	30316,6	5,0	5	10439,0	0,0	18846,0	2023,3
3	Արդշինինվեստբանկ	161568,3	20,9	6	93187,7	9,9	129857,5	26,1	6	43419,0	20,2	31710,8	3,5	3	15513,6	0,0	12239,1	922,4
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	182574,1	12,8	3	134089,9	9,3	152038,3	15,2	3	36620,3	5,9	30535,8	2,6	4	13906,2	0,0	12822,3	626,8
5	Կոնվերս Բանկ	144399,7	3,3	7	54101,1	16,2	127029,6	3,8	7	21720,4	14,8	17370,1	0,4	9	4923,3	0,0	8437,0	47,3
6	Յոնիքբանկ	115934,0	7,9	8	84941,6	6,9	98274,9	8,4	8	53515,6	11,4	17659,1	5,1	8	11400,7	0,0	6415,0	888,9
7	Հայէկոնոմբանկ	60351,4	11,2	14	31474,6	-6,7	51138,6	13,3	14	11527,7	18,1	9212,7	0,8	17	2333,3	0,0	1392,1	53,6
8	ԱՄԵՐԻՎԲԱՆԿ	201400,4	5,6	2	141868,0	-0,5	166317,3	5,8	2	34128,1	2,1	35083,2	4,7	2	25477,3	0,0	9543,6	1418,9
9	Ինելկոբանկ	88778,8	26,5	10	63979,0	26,4	73779,6	31,3	11	14458,1	14,2	14999,2	7,0	12	7894,4	78,2	3610,9	956,3
10	Հայբիզնեսբանկ	168484,6	12,7	5	108344,7	8,6	145083,5	11,4	5	46655,0	27,1	23401,2	21,8	6	17500,0	30,1	5549,1	129,1
11	Անելիք Բանկ	73450,4	8,4	12	40870,7	-0,1	57999,7	11,5	12	18387,0	17,8	15450,7	-2,0	11	14300,0	0,0	1409,3	25,7
12	Առէկսիմբանկ	95860,1	16,5	9	75896,6	15,5	80149,5	19,9	9	15136,6	17,1	15710,6	1,6	10	12347,3	0,0	3108,5	251,1
13	Արցախբանկ	67557,1	8,9	13	48484,2	10,0	57268,0	9,3	13	9310,0	7,8	10289,1	6,9	15	6561,2	0,0	2964,1	666,7
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	87708,1	31,0	11	48801,6	33,2	75475,5	36,6	10	13302,2	14,6	12232,6	4,5	13	7148,0	0,0	4602,5	487,0
15	ԱրմսվիսԲանկ	48315,9	22,4	15	22881,6	13,6	37912,1	27,9	15	3313,5	14,7	10403,8	5,9	14	7002,0	0,0	2301,1	621,4
16	Զարգ. Հայկական Բանկ	36104,6	9,7	18	24489,4	13,2	28259,0	11,3	17	15540,3	35,7	7845,7	4,4	19	4556,7	0,0	2896,8	329,0
17	Պրոմեթեյ Բանկ	41349,1	13,1	16	25669,3	11,1	22574,0	24,1	19	4965,2	59,5	18775,1	2,2	7	14400,0	0,0	4212,7	340,2
18	Բիբլոս Բանկ Հայաստան	37816,1	4,9	17	29296,5	6,4	28846,6	6,5	16	9433,5	14,3	8969,5	0,1	18	8382,2	0,0	538,2	-38,0
19	ԲՏԱ Բանկ	9405,5	9,1	21	4842,1	11,8	3945,7	25,7	21	1592,6	23,0	5459,9	-0,4	20	6520,0	0,0	-1083,2	-41,4
20	Պրոկոնեխտ Բանկ	30252,3	13,5	19	24991,7	16,0	24828,5	17,3	18	7797,6	68,0	5423,9	-1,1	21	6490,0	0,0	-1066,0	-58,6
21	Մելլար Բանկ	26369,8	-37,7	20	10217,3	-60,8	16092,9	-50,3	20	48,2	3,7	10276,8	3,2	16	6850,0	0,0	3307,7	315,6
	Ընդամենը	2074049,8	9,8		1337246,6	7,7	1698955,7	11,2		434413,8	14,2	375094,4	3,9		233945,2	3,3	108420,8	11407,0